# ԼՂԻՄ. ԵՐԲ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԵՐԿՐԱՆՔ ՉԷ

...արաբաղցի խաղողագործ-
...չէին էլ կարող ենթա-
...որ իրենց աշխատան-
...երջնական արդյունքների
...անդրադառնան ոչ միայն
...աստ եղանակային պայ-
...ը, այլև ազգային քա-
...անության սխալները։
...ի պրոբլեմի լուծման
...կանալի ձգձգումը, որը
...ում հանգեցրել է լար-
...յան ծավալմանը, գյու-
...խատավորների առջև
...ուղղակի անլուծելի
...եր։ Օրինակ, ինչպե՞ս
...մփոփել խաղողի բերքահա-
...ը, երբ վառելիքի պակա-
...ի պատճառով կանգնած են
...փոխադրամիջոցները։ Ինչպես
...արտադրանքը առաքել սպա-
...ողներին, եթե ոչ մի մեքենա
...ի կարող դուրս գալ մարզի
...սահմաններից։ Ինչ տրամա-
...դրությամբ աշխատեն արևային
...ղկույզների ղարաբաղցի վար-
...պետները, եթե Հայաստանում
...իրանց հայրենակիցները այս
...տարի այդպես էլ չհամտեսե-
...ցին արցախյան հողի քաղցր
...պտուղները։ Հայկական ԽՍՀ-ի
...համար նախատեսված 2800
...տոննա թարմ խաղողը ստիպ-
...ված վերածեցին գինենյութի։
Գյուղատնտեսության մասնա-
գետները լավ են պատկերաց-
նում, թե ընդհանուր ինչպիսի
...վնասներ ... գյուղատնտեսու-
թյուններ ու խորհտնտեսու-
թյունները, քանի որ այդ մշա-
կաբույսի սեղանի սորտերի
գրեթե կես են զգալիորեն բար-
ձր են տեխնիկականների
գներից։

Մարզի այսօրվա իրավիճա-
կը ցույց է տալիս, որ պետու-
թյանը խաղողի վաճառքի ըն-
թացիկ տարվա պլանը ինք-
նավար մարզը չի կատարի։ Եթե հաջողվի նախատեսված 70 հազարի փոխարեն հանձնել 55 հազար տոննա, ապա դա էլ դրությունից ելք է, քանզի դեռ մնացել է ավելի քան 20 հազար տոննա բերք։

Զարմանք է հարուցում այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական տնտեսություններին պատկանող և արտադրանքով բեռնված մեքենաների առջև, որպես կանոն, կանաչ լույս է վառված։ Հաշվի չառնելով տեղական իշխանությունների կարծիքը, նրանք հումքը հասցնում են ԼՂԻՄ-ին սահմանակից Աղդամի շրջանի խաղողի վերամշակման կետեր։ Բացի դրանից, այդ տնտեսությունները վառելիքաքսանյութերի հետ կապված դժվարություններ չունեն։

Այ քեզ բան։ Մեկին ամեն ինչ, մյուսին՝ ոչինչ։ Սակայն արցախցիները չեն համակերպվի նման բաշխմանը։ Պատահական չէ, որ նրանք բարձրացրին Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցը։ Եվ մարդիկ մոտադիր չեն ընկճվել։ Ինչպես Արմենպրեսի թղթակցին հայտնեցին մարզային ագրոարդում, երկրամասի խաղողագործները հնարավոր և անհնար ամեն ինչ կանեն մնացած բերքը փրկելու համար։

Բայց գյուղի աշխատավորներին սպասում են նոր հոգսեր, որոնք այս անգամ կապված են առաջիկա ցանքի կամպանիայի հետ։ Թեկուզ այն պատճառով, որ երկրի ուրիշ ռեգիոններից այստեղ ուղարկվող սերմացուի մի մասը վագոններում երկար մնացել է Ադրբեջանի տարբեր երկաթուղային կայարաններում։ Եվ եթե հաշվի առնենք, որ մարզի հիմնական հացահատիկային արտերը գտնվում են ցածրադիր գոտում, որը մոտ է ադրբեջանական շրջաններին, պարզ կդառնա, թե ինչու հիմա անվտանգ չէ հողագործների աշխատանքը։ Այնինչ վաղուց ժամանակն է պատասխանատվության կանչել այն անձանց, ովքեր մարդկանց դրդում են հակաիրավական գործողությունների։ Ի վերջո, կգա՞ արդյոք այդ օրը...

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**(Արմենպրեսի սեփ. թղթ.)**
ԼՂԻՄ